ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 22 » հուլիս 2026թ. No 4241 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի կետ 1-ի, ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման կետ 170-ի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 01/3822-26 առ 20.07.2026թ. փորձագիտական եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Եվրասիական տնտեսական միության գրանցման (միայն Հայաստանում կիրառման համար) ընթացակարգով գրանցել երաշխավորված 4 դեղը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1)Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղրյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի

32-րդ և ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման 180-րդ կետի պահանջների:

2)Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Ուժը կորցրած ճանաչել նախկինում գրանցված Տրիֆտազին N 22450, Գլիցերին N 22222 և Մեքսիպամ N 20142 դեղերի գրանցման հավաստագրերը համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 180-րդ կետի:

5.Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ.Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

6. Դեղի գրանցման ժամկետը սահմանվում է համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 180-րդ կետի, հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2026 թվականի հուլիսի «22 » - ի N4241 - Ա հրամանի

Եվրասիական տնտեսական միության գրանցման ընթացակարգով (միայն Հայաստանում կիրառման համար) գրանցված դեղերի ցանկ

ՀՀ	Առևտրային անվանումը	Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը	Դեղաձևը	Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը	Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Բաց թողնման կարգավիճակը	եզրակացության համար և ամսաթիվ
1	Տրիֆտազին	տրիֆլուոպերազին (տրիֆլուոպերազինի հիդրոքլորիդ)	դեղահատեր թաղանթապատ	5մգ; (48/2x24/) բլիստերում	Արվիմեդ ՍՊԸ, Կոտայքի մարզ, 2204, ք. Աբովյան, 2-րդ միկրոշրջան, շենք 19	Հայաստանի Հանրապետություն	Արվիմեդ ՍՊԸ, Կոտայքի մարզ, 2204, ք. Աբովյան, 2-րդ միկրոշրջան, շենք 19	Հայաստանի Հանրապետություն	Դ	24302 (039827) 17.07.2026
2	Գլիցերին	գլիցերոլ	լուծույթ տեղային կիրառման (միկրոհոգնա)	900մգ/գ; (1) պլաստիկե տարա 5մլ, (1) պլաստիկե տարա 10մլ	ԷՍԿՈ-ՖԱՐՄ ՍՊԸ, Նոր Նորք 5-րդ զանգված, Միկոյան 13, Երևան 0079	Հայաստանի Հանրապետություն	ԷՍԿՈ-ՖԱՐՄ ՍՊԸ, Նոր Նորք 5-րդ զանգված, Միկոյան 13, Երևան 0079	Հայաստանի Հանրապետություն	ԱԴ	24303 (040811) 17.07.2026
3	Մեքսիպամ	էթիլմեթիլհիդրոքսիպիրիդինի սուկցինատ	լուծույթ ն/ե և մ/մ ներարկման	50մգ/մլ; (5) ապակե սրվակներ 2մլ	Լիկվոր ՓԲԸ, 0089, Երևան, Քոչինյան փ., 7/9	Հայաստանի Հանրապետություն	Լիկվոր ՓԲԸ, 0089, Երևան, Քոչինյան փ., 7/9	Հայաստանի Հանրապետություն	Դ	24304 (034221) 17.07.2026
4	Կալիումի քլորիդ	կալիումի քլորիդ	լուծույթ ն/ե կաթիլանեներարկման	40մգ/մլ; 200մլ պլաստիկե փաթեթ	Լիկվոր ՓԲԸ, 0089, Երևան, Քոչինյան փ., 7/9	Հայաստանի Հանրապետություն	Լիկվոր ՓԲԸ, 0089, Երևան, Քոչինյան փ., 7/9	Հայաստանի Հանրապետություն	Դ	24305 (041008) 17.07.2026